

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

\_\_\_\_\_ի 2019 թվականի N \_\_\_\_\_-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 17-ի «**Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին**» N 417 որոշման 5-րդ կետում «մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 17-ի «**Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին**» N 419 որոշման 5-րդ կետում «մշակույթի» բառը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 27-ի «**Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտը վերակազմակերպելու մասին**» N 478 որոշման 1-ին և 2-րդ կետերում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի «**Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին**» N 886-Ն որոշման 5-րդ կետում «մշակույթի» բառը

- փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 7-ի **«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Երեվանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին»** N 1920-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված հավելվածի 23-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
  6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի **«Հայաստանի Հանրապետության պետական արտադարձական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական արտադարձական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին»** N 2145-Ն որոշման ամբողջ տեքստում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
  7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի **«Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»** N 2044-Ն որոշման 4-րդ կետում «մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
  8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի **«Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»** N 2156-Ն որոշման 5-րդ կետում «մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
  9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի **«Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»** N 2157-Ն որոշման 5-րդ կետում «մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
  10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի **«Երեվանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Երեվանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին»** N 2176-Ն որոշման 3-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
  11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 6-ի N 202 որոշման մեջ փոփոխություն կատարելու և պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»** N 312-Ն որոշման 7-րդ կետում «մշակույթի» բառը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
  12. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 3-ի **«Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու**

**մասին»** N 971-Ն որոշման 4-րդ կետում «մշակույթի» բառը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:

13. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի **«Պետական ոչ առևտրային կազմակերպությունն ստեղծելու և «Թանգարանագիտության հանրապետական գիտամեթոդական կենտրոն» պետական հիմնարկը լուծարելու մասին»** N 896-Ն որոշման 6-րդ կետում «մշակույթի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
14. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 17-ի **«Մի շարք բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի կառավարման լիազորությունները Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը վերապահելու մասին»** N 1250-Ն որոշման 1-ին կետում «սպորտի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
15. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 17-ի **«Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման լիազորությունները Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը վերապահելու մասին»** N 1277-Ն որոշման 1-ին կետում «սպորտի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
16. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի **«Հայաստանի Հանրապետության արհեստագործական հոսքով ավագ դպրոցներն արհեստագործական ուսումնարաններ վերանվանելու, մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»** N 1210-Ն որոշման 3-րդ, 4-րդ և 7-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին և 2-րդ հավելվածների ամբողջ տեքստում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
17. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի **«Պետական ոչ առևտրային կազմակերպությունն ստեղծելու մասին»** N 1877-Ն որոշման 6-րդ կետում «սպորտի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
18. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի **«Պետական ոչ առևտրային կազմակերպությունն ստեղծելու մասին»** N 1878-Ն որոշման 5-րդ կետում «սպորտի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:

19. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 24-ի **«Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»** N 441-Ն որոշման 5-րդ կետում «սպորտի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
20. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 31-ի **«Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»** N 349-Ն որոշման 6-րդ կետում «մշակույթի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
21. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի **«Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»** N 1194-Ն որոշման 6-րդ կետում և որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ և 17-րդ կետերում «մշակույթի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
22. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի **«Գործիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»** N 2400-Ն որոշման 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
23. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 29-ի **«Առևտրի ազգային հիմնադրամ» հիմնադրելու մասին»** N 488-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված հավելվածի ամբողջ տեքստում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
24. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 14-ի **««Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու, «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին գույք հանձնելու մասին»** N 872-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
25. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 23-ի **«Երեվանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու մասին»** N 80-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
26. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի **«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»** N 223-Ն որոշման 4-րդ կետում «մշակույթի» բառը փոխարինել

- «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
27. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 24-ի **«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծելու մասին»** N 742-Ն որոշման 3-րդ կետում «մշակույթի» բառը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
28. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի **«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (պոլիտեխնիկ)» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին»** N 1290-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 3-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
29. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի **«Երևանի Մխիթար հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին»** N 1407-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում և 111-րդ կետի 3-րդ ենթակետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
30. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի **«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երեվանի պետական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին»** N 1408-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
31. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի **«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին»** N 138-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
32. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 19-ի **«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին»** N 615-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:

33. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 660-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
34. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի «**Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «**Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ**» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 771-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
35. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի «**Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «**Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան**» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 1031-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
36. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի «Սիսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» N 969-Ն որոշման 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
37. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի «Սիսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» N 968-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ և 7-րդ կետերում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
38. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի «**Գորիսի N 1 հատուկ դպրոց**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» N 986-Ն որոշման 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
39. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի «**Կայուն դպրոցական սնունդ**» հիմնադրամ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» N 1391-Ն որոշման 2-րդ կետում և որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ, 26-րդ, 27-րդ, 30-րդ կետերում և 14-րդ կետի 6-րդ ենթակետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:

40. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի **«Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, **«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն»**, **«Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն»** և **«Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն»** պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» N 10-Ն որոշման 8-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
41. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի **«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը **«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա»** հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 474-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
42. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 8-ի **«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը **«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան»** հիմնադրամի վերակազմավորելու, որպես նվիրատվություն գույք ընդունելու և գույք տրամադրելու մասին» N 657-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
43. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 20-ի **«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը **«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ»** հիմնադրամի վերակազմավորելու մասին» N 927-Ն որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ և 34-րդ կետերում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով, իսկ 28-րդ կետում «կրթության և գիտության նախարարի», «կրթության և գիտության նախարարը» և «կրթության և գիտության նախարարության» բառերը փոխարինել համապատասխանաբար «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի», «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը» և «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության» բառերով:
44. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի **«Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Ալավերդու

**մասնաճյուղ ստեղծելու մասին»** N 1057-Ն որոշման 5-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:

45. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի **«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի վերակազմավորելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 954-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»** N 1696-Ն որոշման 3-րդ կետում որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 4-րդ, 27-րդ և 33-րդ կետերում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
46. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքը հետ վերցնելու և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու մասին» N 1736-Ն որոշման 4-րդ կետում «սպորտի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:
47. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: